Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ
Վ. Կարապետյան

# ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

05.02.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 29.01.2016թ.-ի թիվ 7 կարգադրությունը, <<Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2014-2015թթ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Ա.Գրիգորյանը և հաշվապահ՝ Ա.Մխիթարյանը:

**Աուդիտի հիմնական ուղղությունները.**

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

**Ընդհանուր տվյալներ.**

**Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն,ներքին աուդիտորի որակավորում: Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 5 ամսվա ներքին աուդիտորի փորձ:**

<<Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց>> Պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ք. Եղեգնաձոր:

**2014 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝**

-դասարանների թիվը- 16:

-աշակերտների թիվը- 397:

-աշակերտների միջին խտությունը- 24.8:

Տարրական դպրոց 8 դասարան, աշակերտների թիվը 208, միջին խտությունը 26:

Միջին դպրոց 8 դասարան, աշակերտների թիվը 189, միջին խտությունը 23.6:

Աշխատողների թվաքանակը՝ 53, մանկավարժական աշխատողների թվաքանակը՝ 36, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը՝ 21.3, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը՝ 17, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը՝ 17:

## 2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

**2014թ.**

հազ.դրամ

| Ցուցանիշներ | Տարրական դպրոց | | | Միջին դպրոց | | | Ավագ դպրոց | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամի | 4 ամի | Ընդամենը | |
| 1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման | 216 | 208 | X | 179 | 189 | X | | | X | |
| 2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի | 216 | 208 | X | 179 | 189 | X | | | X | |
| 3.Աշակերտների թիվը ըստ մատյանների | 216 | 209 | X | 179 | 189 | X | | | X | |
| 4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/ | 121097 | 121097 | | 121097 | 121097 | | | | | |
| 5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/ | 13784.3 | 6892.2 | 20676.5 | 16371.6 | 8185.8 | 24557.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 45233.9 |
| 6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/ | X | X | | X | X | | X | X | | 16876 |
| 7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | |
| 8.Այլ լրացուցիչ պակասեցում | X | X | | X | X | | X | X | | 1028.8 |
| 9.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 61081.1 |
| Ըստ աուդիտի 3*4 | 13784.3 | 6892.2 | 20676.5 | 16371.6 | 8185.8 | 24557.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 45233.9 |
| 6.Պահպանման ծախսեր | X | X | | X | X | | X | X | | 16876 |
| Այլ լրացուցիչ ավելացում | X | X | | X | X | | X | X | | -1028.8 |
| 8.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 61081.1 |
| Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/ | X | X | | X | X | | X | X | | 0.0 |

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական և միջին դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար 213 և 182 աշակերտ:

## 2015թ.

հազ.դրամ

| Ցուցանիշներ | Տարրական դպրոց | | | Միջին դպրոց | | | Ավագ դպրոց | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 8 ամիս | 4 ամիս | Ընդամեն | 8 ամիս | 4 ամիս | Ընդամեն | 8 ամի | 4 ամ | Ընդամեն | |
| 1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման | 208 | 211 | X | 193 | 215 | X | | | X | |
| 2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի | 208 | 211 | X | 193 | 214 | X | | | X | |
| 3.Աշակերտների թիվը ըստ մատյանների | 208 | 212 | X | 193 | 213 | X | | | X | |
| 4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/ | 124000 | 124000 | | 124000 | 124000 | | | | | |
| 5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/ | 13894.4 | 6947.2 | 20841.6 | 18482.6 | 9241.3 | 27723.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 48565.6 |
| 6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/ | X | X | | X | X | | X | X | | 21539.3 |
| 7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | |
| 8.Այլ լրացուցիչ պակասեցում | X | X | | X | X | | X | X | | 1953.9 |
| 9.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 68151.0 |
| Ըստ աուդիտի 3*4 | 13894.4 | 6947.2 | 20841.6 | 18482.6 | 9241.3 | 27723.9 | 0.0 | 0.0 | 0.0 | 48565.6 |
| 6.Պահպանման ծախսեր | X | X | | X | X | | X | X | | 21539.3 |
| Այլ լրացուցիչ ավելացում | X | X | | X | X | | X | X | | -1953.9 |
| 8.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 68151.0 |
| Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/ | X | X | | X | X | | X | X | | 0.0 |

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական և միջին դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար 209 և 200 աշակերտ:

**Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը**

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել □ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ□ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպու-թյան հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

հազ.դրամ

| Անվանումը | Նախատես-ված | Ֆինանս. | Դրամարկ. ծախս ըստ հաշվետ. | Դրամարկ. ծախս ըստ աուդիտի | Փաստ. ծախս ըստ հաշվետվ. | Փաստ. ծախս ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ֆինանսավորում | 69490.3 | 69490.3 | 62750 | 62750 | 63514.6 | 63190 | -6300.3 |
| Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված | 65267.2 | 61081.1 | 62750 | 62750 | 63514.6 | 63190 | -2077.2 |
| Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ | 56821.5 | | 55633.2 | 55633.2 | 55633.2 | 55633.2 | -1188.3 |
| Պարտադիր սոց. ապահով. վճարներ | | | | | | | 0 |
| Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից | 8445.7 | | 7116.8 | 7116.8 | 7881.4 | 7556.8 | -888.9 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 365.8 | | 359.2 | 359.2 | 359.2 | 359.2 | -6.6 |
| Կենցաղ և հանրային սննդի նյութեր | 2188.4 | | 2083.6 | 2083.6 | 2083.6 | 2083.6 | -104.8 |
| Հատուկ նպատ.նյութեր | 270 | | 379.9 | 379.9 | 379.9 | 379.9 | 109.9 |
| Այլ ծախսեր | 167.3 | | 167.3 | 162.2 | 167.3 | 162.2 | -5.1 |
| Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր | | | | | | | 0 |
| Ներքին գործուղումներ | | | | | | | 0 |
| Կապի ծառայության վճարներ | 98 | | 106.3 | 106.3 | 106.3 | 109.1 | 11.1 |
| Կոմունալ ծառայությունների վճար | 5106.2 | | 3651.4 | 3656.5 | 4416 | 4093.7 | -1012.5 |
| Էլ. էներգիայի ծախսեր | 4651.5 | | 401 | 438.7 | 401 | 449.2 | -4202.3 |
| Վառելիքի և ջեռուցում ծախսեր | | | 2965.1 | 2932.5 | 3714.7 | 3342.1 | 3342.1 |
| Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար. | 405.7 | | 236.3 | 236.3 | 251.3 | 253.4 | -152.3 |
| Տրանսպորտ | 49 | | 49 | 49 | 49 | 49 | 0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 250 | | 369.1 | 369.1 | 369.1 | 369.1 | 119.1 |
| Բանկի տոկոս | | | | | | | 0 |
| Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց. | 4113.2 | 4113.2 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր* | | 2452.1 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր** | 109.9 | 109.9 | | | | | |
| Այլ ծրագրեր*** | | 1229.8 | | | | | |
| Այլ ծրագրեր**** | | 139.5 | | | | | |
| Այլ ծրագրեր***** | | 364.7 | | | | | |
| | | | | | | | |

* ՀՀ կառավարության 03.07.2014թ.-ի թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 2452.1 հազ.դրամ /208 աշակերտ/,

ֆինանսավորվել է 2452.1 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 2347.3 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 2347.3 հազ.դրամ, մնացորդը՝ 104.8 հազ.դրամ:

** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

*** ՀՀ կառավարության որոշմամբ նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման փոխհատուցման գումար:

**** ՀՀ կառավարության 10.11.2011թ.-ի թիվ 1745-Ն որոշմամբ ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու նպատակով հատկացված գումար:

***** ՀՀ կառավարության 17.04.2014թ.-ի թիվ 534-Ն որոշմամբ ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման նպատակով հատկացված գումար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

| Անվանումը | Նախատես-ված | Ֆինանս. | Դրամարկ. ծախս ըստ հաշվետ. | Դրամարկ. ծախս ըստ աուդիտի | Փաստ. ծախս ըստ հաշվետվ. | Փաստ. ծախս ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ֆինանսավորում | 80914.3 | 80914.3 | 69475.4 | 69475.4 | 70586.3 | 69897.5 | -11016.8 |
| Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված | 73969.9 | 68151.0 | 69475.4 | 69475.4 | 70586.3 | 69897.5 | -4072.4 |
| Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ | 61502.5 | | 59925.8 | 59925.8 | 59925.8 | 59925.8 | -1576.7 |
| Պարտադիր սոց. ապահով. վճարներ | | | | | | | 0 |
| Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից | 12467.4 | | 9549.6 | 9549.6 | 10660.5 | 9971.7 | -2495.7 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 365.8 | | 365.8 | 365.8 | 365.8 | 365.8 | 0 |
| Կենցաղ և հանրային սննդի նյութեր | 4463.6 | | 4042.6 | 4042.6 | 4042.6 | 4042.6 | -421 |
| Հատուկ նպատ.նյութեր | 270 | | 350 | 350 | 350 | 350 | 80 |
| Այլ ծախսեր | 1300 | | 755.4 | 193.8 | 755.4 | 193.8 | -1106.2 |
| Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր | | | | | | | 0 |
| Ներքին գործուղումներ | | | | | | | 0 |
| Կապի ծառայության վճարներ | 120.5 | | 116.4 | 116.4 | 116.4 | 105.6 | -14.9 |
| Կոմունալ ծառայությունների վճար | 5607.5 | | 3659.1 | 4220.7 | 4770 | 4653.6 | -953.9 |
| Էլ. էներգիայի ծախսեր | 5079.5 | | 3106.9 | 444.2 | 4201.4 | 469.3 | -4610.2 |
| Վառելիքի և ջեռուցում ծախսեր | | | | 3273.4 | | 3725.6 | 3725.6 |
| Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար. | 430 | | 454.2 | 405.1 | 470.6 | 360.7 | -69.3 |
| Տրանսպորտ | 98 | | 98 | 98 | 98 | 98 | 0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 340 | | 260.3 | 260.3 | 260.3 | 260.3 | -79.7 |
| Բանկի տոկոս | | | | | | | 0 |
| Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց. | 6740.3 | 6740.3 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր* | | 4915.6 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր** | 124.1 | 124.1 | | | | | |
| Այլ ծրագրեր*** | 80 | 80 | | | | | |
| Այլ ծրագրեր**** | | 903.3 | | | | | |

* ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 4915.6 հազ.դրամ /209 աշակերտ/,

ֆինանսավորվել է 4915.6 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 4492.3 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 4492.3 հազ.դրամ, մնացորդը՝ 531.7 հազ.դրամ:

** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

*** Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացված սեմինարի ֆինանսավորում:

**** ՀՀ կառավարության 10.11.2011թ. թիվ 1745-Ն որոշմամբ ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու նպատակով հատկացված գումար:

# Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

| | Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար. | | Սոց ապահ. վճարներ | | Կապի ծառայութ. | | Էլ էներգ. ծախսեր. | | Գազ | | Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | D | K | D | K | D | K | D | K | D | K | D | K | D | K |
| Սն.01.01.14թ. | | | | | | 6.2 | | 37.1 | | 292.6 | | 8.8 | 0.0 | 344.7 |
| Շրջանառու-թյուն 2014 թ. | 55633.2 | 55633.2 | | | 106.3 | 109.1 | 438.7 | 449.2 | 2932.5 | 3342.1 | 3639.3 | 3656.4 | 62750.0 | 63190.0 |
| Սն.01.01.15թ. | | | | | | 9.0 | | 47.6 | | 702.2 | | 25.9 | 0.0 | 784.7 |
| Շրջանառու-թյուն 2015թ. | 59925.8 | 59925.8 | | | 116.4 | 105.6 | 444.2 | 469.3 | 3273.4 | 3725.6 | 5715.6 | 5671.2 | 69475.4 | 69897.5 |
| Սն.01.01.16թ. | | | | | 1.8 | | | 72.7 | | 1154.4 | 18.5 | | 20.3 | 1227.1 |

## Հաշվապահական հաշվեկշիռ

Ձև N 1

առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ..

հազ.դրամ

| Ակտիվ | Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության | Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|
| Ոչ ընթացիկ ակտիվներ որից | 55166.6 | 55166.6 | 0 |
| հիմնական միջոցներ | | | 0 |
| մն.արժ. | 55166.6 | 55166.6 | 0 |
| արժեքը | 55166.6 | 55166.6 | 0 |
| մաշվածություն | | | 0 |
| Ընթացիկ ակտիվներ որից | 12218.2 | 12238.5 | 20.3 |
| Նյութեր | 124.1 | 124.1 | 0 |
| փոքրարժեք և արագամաշ առարկաներ | 655.2 | 655.2 | 0 |
| մն.արժ. | 0 | 0 | 0 |
| արժեքը | | | 0 |
| մաշվածություն | | | 0 |
| կարճաժամ. դեբիտ.պարտքեր | 0 | 20.3 | 20.3 |
| որից հաշ. տրված կանխ.վճ.գծ. | | | 0 |
| հաշվ. գնորդ. և պատ. հետ | | | 0 |
| Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի հետ | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական վնասի հատուցման գծով | | | 0 |
| հաշվարկներ բյուջեի հետ | | | 0 |
| հաշվարկներ հաշվետու անձանց հետ | | | 0 |
| հաշվ տարբ. դեբիտ. հետ | | 20.3 | 20.3 |
| դրամականկան միջոցներ,որից | 11438.9 | 11438.9 | 0 |
| դրամարկղ | | | 0 |
| հաշվարկային հաշիվ | 11438.9 | 11438.9 | 0 |
| **Հաշվեկշիռ** | 67384.8 | 67405.1 | 20.3 |
| Պասիվ | | | 0 |
| Սեփական կապիտալ որից՝ | 66273.9 | 66178 | -95.9 |
| Լրացուցիչ կապիտալ | 66273.9 | 66178 | -95.9 |
| Հաշվետու տար.չօգ. զուտ շահ. | | | 0 |
| Նախ. կար. չօգ. զուտ շահ. | | | 0 |
| Եկամ. վերաբ. շնորհ. | | | 0 |
| Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր | 1110.9 | 1227.1 | 116.2 |
| այդ թվում | | | 0 |
| հաշվարկ. մատակ.և կապալ. հետ | | | 0 |
| հաշվարկներ բյուջեի հետ | | | 0 |
| Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ. | | | 0 |
| այդ թվում տույժեր և տուգանքներ | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով | | | 0 |
| հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ | 1110.9 | 1227.1 | 116.2 |
| հաշվարկներ հաշվետու անձանց հետ | | | 0 |
| Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից | 0 | 0 | 0 |
| գալիք ժաման. եկամուտներ | | | 0 |
| **Հաշվեկշիռ** | 67384.8 | 67405.1 | 20.3 |
| | | | |

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին**
**հաշվետվություն**
առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4
հազ.դրամ

| Ցուցանիշների անվանումը | Տող | Գումարն ըստ հաշ. | Գումարն ըստ աուդիտի տվյալների | Շեղում |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 010 | 6740.3 | 6740.3 | 0.0 |
| գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | | | |
| Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից | 020 | 68151.0 | 68151.0 | 0.0 |
| Ապրանքների իրացումից | 030 | | | 0.0 |
| Ընթացիկ այլ ակտիվների իրացումից | 040 | | | 0.0 |
| Ստացված կանխավճարներից | 050 | | | 0.0 |
| Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից | 060 | | | 0.0 |
| Գործառնական այլ գործունեությունից | 070 | 6023.0 | 6023.0 | 0.0 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 080 | 74174.0 | 74174.0 | 0.0 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | | | |
| Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց | 090 | | | 0.0 |
| Ապրանքների ձեռք բերման դիմաց | 100 | | | 0.0 |
| Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց | 110 | 9549.6 | 9549.6 | 0.0 |
| Տրված կանխավճարներ | 120 | | | 0.0 |
| Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց | 130 | 59925.8 | 59925.8 | 0.0 |
| Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով | 140 | | | 0.0 |
| Առհաշիվ տրված գումարներ | 150 | | | 0.0 |
| Վճարումներ բյուջե | 160 | | | 0.0 |
| Գործառնական այլ գործունեության նպատակով | 170 | | | 0.0 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 180 | 69475.4 | 69475.4 | 0.0 |
| Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր | 190 | 4698.6 | 4698.6 | 0.0 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ | | 11438.9 | 11438.9 | 0.0 |
| | | | | |

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն.Կարապետյանն՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014-2015 թթ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016 թ.-ի դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջման ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման գործունեությունը գնահատվել է բավարար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

2014-2015թթ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 13 ժամ կամ 0.6 դրույք: 2015-2016թթ.-ին՝ 14.3 ժամ կամ 0.65 դրույք: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2015-2016թթ.-ին 2014-2015թթ.-ի նկատմամբ աճման տենդենց է կրում:

Առ 01.01.2016 թ.-ի դրությամբ կազմակերպության դրամական մնացորդը կազմել է 11438.9 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 20.3 հազ.դրամ /18.5 հազ. դրամ՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների վճար, 1.8 հազ.դրամ՝ կապի ծառայություն/, կրեդիտորական պարտքը՝ 1227.1 հազ. դրամ /72.7 հազ. դրամ՝ էներգետիկ ծառայություններ և 1154.4 հազ. դրամ՝ գազի ծառայության վճար/: 1227.1 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական մնացորդով ամբողջությամբ ապահովված է:

Առ 01.01.2016թ.-ի դրությամբ դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է 10232.1 հազ.դրամ:

**Արձանագրված թերություններ և խախտումներ:**

Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները ամբողջ ծավալով չեն օգտագործվել: Արդյունքում կուտակվել է 11438.9 հազ.դրամի դրամական ազատ մնացորդ՝ որից 636.5 հազ. դրամը ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումարի մնացորդ (2014 թ.-ի մնացորդ՝ 104.8 հազ. դրամ, 2015 թ-ի՝ 531.7 հազ. դրամ):

2015 թ.-ի գնումների պլանում ներառված չեն ԵՀԴԲԸԱՀԱՊՁԲ 01/1 ծածկագրով նախատեսված ապրանքները (կայուն դպրոցական սնունդ), ինչպես նաև չի պահպանվել գնում կատարելու ընթացակարգը:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

**Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝**

ա/ Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները օգտագործել ամբողջ ծավալով, թույլ չտալ դրամական ազատ միջոցների տարեվերջյան կուտակում: (Առաջարկությունների դասակարգման փոքր չափանիշ):

բ/ Գնման գործընթացը կազմակերպել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14, 17-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 30.01.2015 թ-ի թիվ 105 որոշման 15-րդ կետի պահանջների համաձայն: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի

աշխատանքային խմբի ղեկավար՝ Ն. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Հ. Ավետիսյան

Խ. Խաչատրյան

Դպրոցի տնօրենի՝ Ա.Գրիգորյան

Հաշվապահ՝ Ա.Մխիթարյան